

Optimal therapy



12 MAR 2011

Handwritten red scribbles

891.99

U-27

Handwritten 'uz'

ԳԵՂԱՍ ՍԱՐԳՍՆ

Յ ԵՐԿԱԹԵ ՎՈՏՆԱԶԱՅՆԵՐ

Handwritten purple scribbles

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐՈՎԳՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1 9 3 3

29.07.2013

53880

Գրա. եմբաղիք' ~~XXXXXXXXXX~~
Տեխ. եմբաղիք' ~~XXXXXXXXXX~~



2396
47

Այս մերմակ թղթի վրա
Գրում եմ իմ յերգերը.
Թողնում եմ նրա վրա
Իմ կյանքի նուրբ մի թելը.
Ցերը կարդաս այս տողերը
Իմ սիրտն զգա քո դեմ,
Գիտցիք վոր ել չկա նա՛
Փսխվել ե վաղուց արդեն...

ՀՈՒՆԱՐՁՈՆԵՐ

* * *

Թանաք, թուղթ, գրիչ, մեքենա, մկան,
Յեվ սեղան և լույս ելեկտրական.
Յեվ այն բոլորը, ինչով կյանք առա,
Ինչով ապրում եմ յես այժմ ահա,
Յեվ նոր միայն յերգ, ուր հուշեր այնքան...
— Յերգեր իմ ձեր մեջ անթիվ կյանքեր կան:

Ապրողի համար՝ գովք զվարթաձայն,
Մեռածի համար՝ յեղեք հուշարձան...

ԿԱՎՈՅՑ

Նքանց, վաչ ընկան Մայիսիս
Նոյեմբերի համար

Մի կարմիր կակաչ, մի սիրուն կակաչ
Փողոտց ինձ գաչտում վառ մի առավոտ,
Կարծես իմ սրտին ծանոթ ու հանաչ՝
Խոսեց հոգուս հետ մի կարմիր կակաչ:

— Ի՞մ արցունակից, կանգ առ իմ դիմաց,
Քերթերս ալ են, վառ են մեռաքսից,
Այս բաց դաշտի մեջ իմ շունչը պահած՝
Սղասում ելի յես քո գալստին:

Քո ընկերոջից ընդունիր բարև,
Ալ Քերթերիս մեջ հալացքն է նրա,
Նրա մահով եմ սնվել, կյանք առել,
Այս կանաչ, կանաչ, թարմ դաշտի վրա:

Նա մի հերոս եր, ընկալ մե՞ծ կռվում,
Այս հողի վրա, ուր բուսել եմ յես,
Այդ մեծ պայքարում նա կյանքն եր կուտ՝
Հազարների հետ և ըմբոսս և վեա:

Քաղցին նրան ալս հողում ահա,
Ցեղ հողը դարձավ պարարտ ու բերրի,
Գուցի մեռնողի հենց սրտի վրա
Կյանք առա ու քեզ ջերմ բարև բերի:

— Ի՞մ կարմիր կակաչ, ի՞մ սիրուն կակաչ,
Ասա դու նրան, վոր կյանքը դեռ կա,
Վոր խորհրդալին մեր յերկրի վրա
Կրկին թավիչա գարունն է ահա:

Ասա վոր կուտ են մեր շարքերն ելի,
Բայց կռիվը կա առ դեռ կենա,
Շարժում ենք կյանքը մեր անհաղթելի
Սոցիալիստական բելսերի վրա:

Մեր ամենորյա անեղ պայքարում,
Մեր կառուցման մեջ, մեր սրտերում վառ,
Ասա, վոր իր պես հազար ընկերի
Անունը պայծառ պահում ենք անմար:

1920 թ. նոյեմբեր

ՇԻՐԻՍԸ

Հովն. Թումանյանի հիշատակին

Պայծառանուն բանաստեղծի շիրիմի վրա
Արթնացել են հիմա քանի՜ վառ ձնծաղիկներ,
Նրա վճիտ ու քնքշալար լերգերի նման,
Վորոնց վրա դարնան թովիչ արևն ե ընկել:

Պայծառանուն բանաստեղծի շիրիմի վրա
Կանաչել են տասը դարուն՝ վոնց ժպիտը վառ,
Ու ձյունել են, վորպես արծաթ մազերը նրա՝
Տասը ձմեռ, ծանր, վորպես խոհերը պայծառ:

Պայծառանուն բանաստեղծի շիրիմի վրա,
Վորպես վրան բարձրացել ե գունդն արեգակի
Նրա հստակ, նրա պայծառ անունի նման,
Վոր հնչում ե, վոր կանչում ե դեռ հողի տակից:

Պայծառանուն բանաստեղծի շիրիմի վրա,
Արթնացել են հիմա քանի՜ վառ ձնծաղիկներ,
Նրանք չ'երգած հուլզաթաթավ լերգերն են նրա
Վորոնք սրտի ցրտությունից աշխարհ են ընկել:

1933 թ. մարտ.

ԴԱՄԲԱՆԱԿԱՆ

Կառուցման ժամին ընկավ մի բանվոր
Իրա բարձունքից ու փովեց գետնին.
Հողին հանձնեցինք մենք շուքով այսօր
Պայծառ հերոսի գետնաթավալ դին:
Ընկեր, կյանքը քո ավիր մեր կյանքին,
Հերոսի փառքով դու խաղաղ քնի.
Դրանով հասար մի նոր բարձունքի՝
Վորտեղից լերբեք, լերբեք չես ընկնի:

ԿՏԱԿ

Կբարձրանաս մի որ, կլինես խելահաս,
Ու լերկիր կմտնես վորպես գարուն զվարթ,
Գուցե հուզվի հոգիդ, կամ գուցե զարմանաս,
Յերբ ժպտա ջեղ կյանքը և պայծառ, և հպարտ:

Կշրջես արևոտ փողոցները լերկրի,
Կնայես լերկնահաս շենքերին, լույսերին,
Կնայելիր ինչպես մի ծեր պատմաբան
Բոցաշունչ պատմութեան պայծառ լերեսներին:

Ձմալանքի խինդով հոգիդ կպարուրես,
Կժպտան ջո դիմաց շենքերը նազանքով.
— Ի՞նչպես են կառուցել — գիտեմ, կհարցնես.
Քարերը շենքերի կասեն ջեղ.

— Քրտինքով...

Կսրսփա հոգիդ խինդախառ թախիծով,
Յեվ ասես կյանք կառնի ջո դեմ ամեն մի քար,
Դու առաջ կշարժվես ճիշտ միևնույն դժով,
Ու ջո դեմ կփռվի լուսեղ մի ճանապարհ:

Կբացվեն ջո առաջ անհամար գործարան,
Ու հազար մեքենա սրտատրոփ զարկով,
— Ի՞նչպես են կառուցել — կհարցնես նրանց,
Ու հազար մեքենա կասեն ջեղ.

— Ջրկանքով...

Կբալլես դու ելի միշտ առաջ ու առաջ,
Կկանգնի ջո դիմաց պանթեոն մի պայծառ,
Արձաններ մարմարի՝ սրախողխող արված
Մարտիկներ անվանի ու անանուն հազար:

Կնայես, կխորհես՝ հոգիդ թախիծով լի՝
Կճանաչես նրանց կոճուճար անունով.
— Ի՞նչպես են բարձրացել — կհարցնես ելի,
Արձանները մեկտեղ կասեն ջեղ.

— Արունքով...

Բայց ինչ վոր կասեն ջեղ լեզուներով հազար,
Քարերը շենքերի, արձանները հսկա,
Ընկեր իմ անանուն, թող ջո հոգին պայծառ
Հազար անգամ ավել, հազար սրտով դդա:

1933 թ. հուլիս

ՈՐԱՅՈՒՅՑ

Պոկում եմ լես այսորվա քո թերթիկը, որացուլց,
 Խինդաշաղախ թախիծով, հաճուլքով եմ պոկում լես,
 Ինչպես աշնան մի տերև, ու վարդի թերթը ինչպես,
 Պոկում եմ լես այսորվա քո թերթիկը, որացուլց:

Յես տեսնում եմ նրա մեջ ժամերի վազըր զսեմ,
 Մահացումներ եմ տեսնում և ծնունդները բազում,
 Յես տեսնում եմ նրա մեջ գալիք մեր կյանքը լուսե,
 Այնքան հստակ, այնքան ջինջ, ինչպես վճիռ յերազում:

Ու քրտինքներ հորդառատ ու չեռանդ եմ տեսնում լես,
 Բո թերթիկում, որացուլց—ժամանակի անջինջ քայլ,
 Յեվ խորտակված սերերի մորմոքումները հրկեզ,
 Յեվ խանդավառ որբերի ցնծությունն եմ զգում լես:

Յեվ գիտեմ, վոր պոկում ե նա ել մի որ իմ կյանքից,
 Յեվ առաջ ե ընթանում կյանքը մի քայլ ավելի,
 Մահացն հողիս, որացուլց, վորպես մանուկ անհանգիստ,
 Ականջում ե նոր կյանքի յերկաթաձալն քայլերին:

Ու գիտեմ լես, գիտեմ լես, ժամանակի վորպես քայլ
 Թարմ հեաքերն այսորվա դեռ աշխարհում կմնան,
 Վորպես ծիծաղ, վորպես մահ, հերոսության վորպես փայլ,
 Վորպես ծնունդ, վոր հյուսեց ժամանակի մեքենան:

Պոկում եմ լես այսորվա քո թերթիկը, որացուլց,
 Խինդաշաղախ թախիծով, հաճուլքով եմ պոկում լես,
 Ինչպես աշնան մի տերև ու վարդի թերթը ինչպես,
 Պոկում եմ լես այսորվա քո թերթիկը, որացուլց...

1933 թ. հունվար

ԲԵՐԲԻ ՅԵՐԳԸ

Յերբ եր ամառ արևառ,
 Արան եր վոսկի ու խնդուն,
 Յերբ կանաչ եր հանդ ու քար,
 Յեղա մի որ լես հանդում:

Արտում վոսկի որորուն,
 Մի գլուղացի խինդով վառ
 Մի զուլգ հասկ եր տրորում
 Իր բռան մեջ արևհար:

Ժպիտներով վողողած
 Զուլգ ափի մեջ բերքն իրա,
 Յեվ շուրթերը իրա թաց
 Հպեց հուզմունքով նրան:

Ու քրտինքի մի կաթիլ
 Ճակատից իր ընկավ վար,
 Ընկավ վոսկի հատիկին,
 Արևահամ, արևառ:

Յեվ դցեց նա իր բռան
 Հատիկները դեպի շեղ,
 Իր խնդությունը դրած,
 Իր քրտինքը նրանց մեջ:

Գ. Մարյան—2



2396
47

✓ Հիմա ո՛վ ե ծամում աչն
 Հացի պատառը վոսկի,
 Վոր հագեցած խնդութչամբ
 Յե՛վ յեռանդովը բազկի,

Յե՛վ ժպիտով իր պայծառ
 Ու հուզեբրով վողողուն,
 Վոր գլուղացին արևառ
 Ախի մեջ եր տրորում:

Մի յերեխձ արևաչ
 Ատամներով իր կաթի,
 Վոր կյանքն ունի իր առաջ
 Նման շքեղ հեքիաթի:

Մի ծերունի՞ գառամած,
 Վոր քալում ե դեպի մահ,
 Վոր իջնում ե ձորը՝ ցած,
 Կամ մահանում ե հիմա:

Կամ մի բանվոր յեռանդուն,
 Կյանքի կերտողը համառ,
 Վոր քրտնաթոր ու անդուլ
 Վոսկի որերի համար

Ու՞ժ յե՛վ յեռանդ ե տալիս
 Յերկաթներին ու քարին,
 Յե՛վ իր կյանքը՝ պանծալի
 Մեր ընդհանուր պալքարին:

Գուցե յես եմ կերել աչն
 Վոսկի բուռն այդ բերքի,
 Ու նրա վառ խնդութչամբ
 Ծնունդ տվի այս յերգին:

Կամ գուցե դու, գուցե նա,
 ✓ Ո՛վ վոր ե թող իմանա՝
 Ժպիտներով խնդութչան,
 Բրախքով եր ցողված նա:

ԽՈՂ

Պաղաղությունն ե կարծես իջել
 Իմ սրտի վրա և իմ հոգուն,
 Արդեն գիշեր ե, արդեն գիշեր
 Ու ախտեղ վոչվոք չի աղմկում:

Յեղնում են դեմս մարդիկ, դեմքեր,
 Միտքս թռչում ե հեռու, հեռու,
 Ու ծանոթ մի մարդ, մի հին ընկեր,
 Ու դեմս բացվող թավիշ գարուն:

— Բարե— ասում եմ նրանց մեկ-մեկ,
 — Վողույն, կովում ընկած մարտիկ ընկեր,
 Մեր դաշտերում հիմա չերդ ու համերդ
 Ու յես արևի տակ ապրում եմ դեռ...

Յեզ խոնվում են իմ դեմ նրանք,
 Փոխվում են դեմքերն, անեանում,
 Ու կանչում են նրանք— ապրում ենք կանք...
 Բայց վոչ վոք իմ դեմ ել չի մնում:

Բարձրանում ե մեկը նորից իմ դեմ,
 Նա մի ծերունի չե դեմքով խաղաղ.
 — Գիտես, յես մեռած եմ, չկամ արդեն,
 Մնվել եմ յես առողջ, մեռել եմ կաղ:

Յեզ ժպտում ե հանդիստ պաշտառ ու ջինջ,
 Վոնց արևադեմ ամպի քուլա,
 Հայացքը թափանցող, խոսքը վճիտ,
 աղբյուրի պես հնչուն, մեղմ ու զուլալ:

— Յես փայտահատ եմ չեղել հնում,
 Կտրել եմ մի որ ընկուղենի
 Մի հին կուսական մեծ անտառում,
 Վոր քո դեմ հիմի սեղան լինի:

Յեզ ժպտում ե հանդիստ, պաշտառ ու ջինջ,
 Վոնց արևադեմ ամպի քուլա.
 — Չունեմ յես հիմա վոչինչ, վոչինչ,
 Բայց աշխարհում դեռ իմ գործը կա:

Յեզ հալչում ե մի ակնթարթում,
 Կորչում ե հազար դեմքերի մեջ,
 Վոր չեղնում են իրար վրա բարդվում,
 Անեանում նորից, չեղնում անվերջ...

Ու խոսում են ալգպես չերկանր, չերկանր,
 Հազար իրերի մեջ ապրող մարդիկ,
 Նրանք, վոր մի որ չեռանդով վառ,
 Կուել են չերկաթ, տաշել են քար:

Յեզ հալչում են իմ դեմ ահա նրանք,
 Կորչում են նոր-նոր դեմքերի մեջ,
 Թաղվում են կարծես խոհերիս տակ,
 Անարտունջ, անխոս ու առանց վեճ:

ԾՈՎԻ ՀԵՏ

Ծնվ, տրտում քույր, ծով կապուտան,
 Աստղերն յերան, ժպտում են քեզ,
 Վոր խռոված հողուղ փայլ տան—
 Բայց քեզ նման հուզված եմ չես:

Հիմա աշուն, ցուրտ ե ելի,
 Բարձրանում են դեմս ահա
 Դիերն մեռած ընկերների՝
 Ալիքներիդ ֆոնի վրա:

Ահա նրանք շարժվում են, տես,
 Քսանվեց մարդ մահը գրկած,
 — Ո՞վ ե նրանց պահ տվել քեզ...
 — Ծնվ, սիրտդ բաց, ծով, սիրտդ բաց...

Ծնվ, մեռել են նրանք հպարտ
 Դասակարգի կովում ահեղ,
 Ու մահվան դեմ հաղթ ու սնպարտ՝
 Միշտ գալիքն են տեսել լուսեղ:

Սպասել են, վոր պիտի գան
 Որեքը մեր պայծառ ու վառ,
 Որեքն յեկան, նրանք չկան,
 Բայց մեր սրտում մնում են հար:

Ծնվ, տրտում քույր, ծով կապուտան,
 Աստղերն յերան, ժպտում են քեզ,
 Վոր խռոված հողուղ փայլ տան,
 Բայց քեզ նման հուզված եմ չես...

ԽՈՐՀՈՒՐԴ

Մի սարսափիր մահից դու,
Իմ բարեկամ, իմ ընկեր,
Մահը կորուստ չե՛ մարդու,
Կործանում չե՛ դեռ:

Սարսափիր դու, յերբ գլխես՝
Ապրում ես ու կաս,
Ու քո կյանքում մեր կյանքին
Բան չունես, վոր տաս:

ՅԵՐԿԱՔԵ ՎՈՏՆԱԶԱՅՆԵՐ

ՏԱՐԵԴԱՐՁԻ ՅԵՐԳ

Բոլոր 12 տարեկաններին

I

Դու ծնվեցիր այն գիշեր, այն կովի գիշեր,
Գուցե հերոս հայրիկիդ մեռնելու պահին,
Նա քեզ թեև չտեսավ՝ մեռնելիս հիշեց,
Յերբ ազմկում եր դրսում բքաշունչ քամին:

Դու ծնվեցիր այն գիշեր, այն կովի գիշեր,
Գնդակների շառաչուն տարափի ներքո,
Յերբ մեր լերկրին շողշողուն արև եր իջել,
Յերբ բանվորները լերկրի՝ տուն դարձան լերգով:

Դու ծնվեցիր այն գիշեր, այն կովի գիշեր,
Վոր՝ փալ առավ արևի շողերի ներկով,
Յերբ մեր բանակը լերկրից տեբերին քշեց՝
Գնդակների շառաչուն տարափի ներքո:

Այսոր լրանում է քո տասներկու տարին,
Դու ծնվեցիր այն գիշեր, այն կովի գիշեր,
Գուցե հերոս հայրիկիդ մեռնելու պահին,
Յերբ մեր լերկրին շողշողուն արև եր իջել:

II

Բոլորեցիր արդեն դու տասներկու տարիդ,
Քեզ հեռ լերկրը աճեց, քեզ հեռ մեծացավ:

Շողշողում ե տհա տես, վորպես պատանի,
Վորպես լույսով զարդարուն փարթամ կաղնի ծառ:

Բացվեցին քո ճամբերում շուշաններ լուսե,
Ելեկտրական արեգներ ժպտացին քո դեմ,
Ինչ՝ իմ մանուկ հասակում հեքիաթն ե ասել,
Դու քո պայծառ աչքերով տեսնում ես արդեն:

Դու քո պայծառ աչքերով տեսնում ես արդեն
Ադամանդե լույսերի կոկոնները վառ,
Այդ աստղեր չեն, վոր չերկնի կապույտում հարբել՝
Ու մի գիշեր հողմերի շունչով թափել վար:

Այդ մեր լեռանդն ե վառվում սյունների վրա,
Վոր թափել ենք ջրառատ հեռու ձորերում,
Վոր տասներկու արեգներ բարձրանան ահա
Նոյեմբերյան մարտերի տասներկու տարում:

III

Նոյեմբերյան դու սերունդ, պայծառ պատանի,
Վոր բարձրացել ես ահա լույսերի չերգով:
Տես, բարձրանում են ահա սերունդներ քանի՜—
Սոցիալիզմի կառուցման աղմուկի ներքո:

Ու ծնվում ե հենց հիմա մի սերունդ լուսե,
Հանդիսավոր այս որին, պայծառ այս գիշեր,
Յերբ վոր չերկրում մի վոսկե հեքիաթ ե հյուսվել,
Յերբ վոր չերկրին խնդության իջել ե գիշեր:

Ու դեռ կգան նորերը, սերունդներ քանի,
Տարիները կգառնան վորպես կարուսել,
Իսկ մենք կժպտանք նրանց ամեն մի քարից,
Յեվ սյունների վրայից՝ վորպես վառ լույսեր:

Նոյեմբերյան դու սերունդ, պայծառ պատանի,
Վոր բարձրացել ես ահա լույսերի չերգով,
Բոլորեցիր արդեն քո տասներկու տարին՝
Սոցիալիզմի կառուցման աղմուկի ներքո:

IV

Կաճի չերկիրը քեզ հետ, կմեծանաս դու,
Ժամանակը կարծաթի մազերդ մի որ,
Յեվ խնդությունը կյանքի քո պայծառ հոգում,
Վոսկի մի չերգ կդառնա, վոսկի մի որոր:

Որորոցում կնիրհի մի լուսե մանուկ,
Կլախվի քո հայացքը նրա սնարին,
Կշշնջան շուրթերդ մի պայծառ անուն,
Ու մեղմ մի չերգ կհնչի մի նոր քնարից:

Ու մեղմ մի չերգ կհնչի մի նոր քնարից,
Որորոցում կնիրհի մանուկը լուսե,
Իսկ մենք կժպտանք նրան ամեն մի քարից,
Յեվ սյունների վրայից՝ վորպես վառ լույսեր:

Այսօր լրանում ե քո տասներկու տարին,
Դու ծնվեցիր այն գիշեր, այն կռվի գիշեր,
Գուցե հերոս հայրիկիդ մեռնելու պահին՝
Յերբ մեր չերկրին շողշողուն արև եր իջել:

1922 թ նոյեմբեր

ՇԵՆՔԸ

Այս բազմահարկ շենքն իմ հոգում
 Հլուսել ե խինդ մի վառ,
 Այս բազմահարկ շենքն իմ հոգուն՝
 Թ՛վում ե վողջ մի դար:

Տեսնում եմ յես մի ապագա
 Ամեն մի քարում,
 Յես գիտեմ, վոր նա պիտի գա՝
 Լուսեղեն այս դարում:

— Ե՛յ, վաղվա մարդ, վոր պիտի գաս,
 Յերբ մենք շենք լինի,
 Ամեն քարում մի կյանք զգա,
 Մի սիրտ սիրով լի:

Այս բազմահարկ շենքն իմ հոգում
 Հլուսել ե խինդ մի վառ.
 Ե՛յ, վաղվա մարդ, ջո հոգում ել
 Թող մնա անմար:

ԱՌԱՎՈՏ

Ե՛յ, խոսում եք իմ սրտի հետ,
 Իմ յերկրի հող ու քար,
 Լուսացել ե մի արահետ,
 Մի առավոտ, մի դար:

Յելի ե նա՝ հուր, հրածին,
 Վոսկեզանգուր աղան,
 Յե՛վ գլուխը լուսաբացին՝
 Թեքել յերկրիս վրա:

Քարն ե կանգնում քարի վրա,
 Վորպես դարը դարի,
 Բարձրանում ե շենքը հիմա
 Ամուր ու վիթխարի:

Ե՛յ, խոսում եք իմ սրտի հետ,
 Իմ յերկրի հող ու քար,
 Ձեր խոսքերում՝ յերանապետ
 Լուսապայծառ մի դար:

ԼՈՒՅՍԵՐԸ

Քո աչքերը պայծառ, քո աչքերը լուսե,
Յերկիր, լամպերը քո լուսե լիմոն,
Մեր հույզերի զվարթ կանչերով ենք հյուսել,
Վոր արևոտ լինի քո յերեկոն:

Յերկիր, լարերով այն՝ ուժի, լույսի առու,
Մեր արչունն ե հոսում, քրտինքը հորդ,
Վոր թափել ենք հեռու ձորերում ու սարում,
Վարարուն գետերի ափերի մոտ:

Յե՛վ այն լամպերից վառ՝ լիմոններից հյուսեղ,
Վոր արևի հետ են ահա մրցում,
Մեր հույզերն են քամվում, վորպես լույսի հեղեղ՝
Հազար շենքերի մեջ և փողոցում:

Այն սյուների վրա մեր սրտերն են փայլում,
Վորպես լույսով լեցուն քնքուշ սրվակ,
Մեր ժպիտն ե վառվում լույսերի հայելում
Խնդության կարկաչը՝ մեր կրծքի աակ:

Ո՛ր, այդ մենք ենք յերկիր հայացքը մեր հառել
Սոցիալիզմի դժվար ճամբին հիմի,
Մեր հույզերով միլիոն լիմոններ ենք վառել՝
Վոր գալիս՝ ճամբեքը մութ չլինի:

ԿԳԱ ՆԱ

Կոմունիզմը կգա սրտերի, §
Սրտերի վրայով կգա նա,
Համայնական հասուն արտերի,
Սրտերի վրայով կգա նա,
Իմ յերկրի փրփրաբաշ ջրերի,
Ջրերի կանչերով կգա նա,
Լույսով լի պղնձե լարերի,
Լարերի հոսանքով կգա նա:

Կզնգան ուսերը յերկաթի,
Յերկաթե ճամբեքով կգա նա,
Կփլին կարգերը դարերի,
Դարերի վրայով կգա նա,
Թշնամին կլինի մահով լի,
Մահերի վրայով կգա նա,
— Ընկեր իմ, շառաչուն մեր կովի,
Մեր կովի շառաչով կգա նա:

Իսկ յեթե չհասնեմ այն որին,
Չհասնեմ այն որին, յերբ գա նա,
Իմացեք, վոր սիրտս քայլերի,
Քայլերի ճայներից կարթնանա.
Միայն թե, ընկերներ իմ անթիվ,
Ասացեք— յեղել ե մի պոփոտ,
Վոր հառած աչքերը քո ճամբին,
Շնչել ե քո ամեն քարի հետ:

Ք Ա Ղ Ա Ք Ի Լ Ե Տ

Կանգնած եմ չես ահա մի բլրակի վրա,
Դեմս տարածվում ե քաղաքը մեր,
Գիշերը փռել ե կապույտ մահուղն իրա
Ու թարթում են հաղար լուսեղ աչքեր:

Աչքերից աչքերս վառ շողեր են խմում,
Ձեփչուռի շուրթերը ճակատիս,
Միտքս քաղաքի հետ մունջ զրույց ե անում,
Ախուրջանն ե խշշում ձորակից:

Յես ասում եմ՝ քաղսք, ահա քո աչքերում,
Բիբերում վոսկեհուր, հաղարափալլ,
Իմ միտքն ե թափառիկ այս ժամին դեգերում,
Վոնց հոգիս չերգում իմ՝ համրաքալլ:

Նա ասում ե՝ մտքիդ այդ չես եմ փալլ տվել,
Այդ չես եմ քալլ տվել քո հոգուն,
Վերելքներս հսկա, վոր չես կարող թվել,
Նրանք են քո հոգում աղմկում:

Յես ասում եմ՝ քաղսք, ահա կարգում եմ չես
Գիշերվա մահուղի Փոնի վրա,
Բոցը քո աչքերի պայծառ գրերի պես
Պատմություն են պատմում հոգուս ահա:

Նրանք ասում են ինձ, — լեղել ե մի գիշեր,
Ո՛ր, մի թանձր գիշեր այս քաղաքում...

— Հարկավոր չե հիշել, հարկավոր չե հիշել...
Այդպես են նրանք աղաղակում...

Հետո լույսերն այն, վոսկու հալոցքի պես
Հայացքները՝ բարձր, նոր շենքերին,
Վորոնք փողոցներից լեռնայել են ասես՝
Գլուխներն ուղղած հորիզոնին:

Այդ շենքերի հղկած յուրաքանչյուր քարից
Նայում են ինձ պայծառ, պայծառ դեմքեր,
Յեվ բոլորը մեկտեղ, կարծես մի անգամից,
Մկսում են նրանք խրոխտ լերգեր:

Նրանց չերգում անդուլ հեքը մեր վողջ կյանքի,
Ու կամքի պողպատյա ձախը հուժկու,
Նրանց չերգում համառ թափը աշխատանքի,
Հուլզերի համերգը նրանց հոգու:

Նրանք չերգում են — մենք մարտիկներ քրթնաթոր,
Մեր ուժով ենք տվել այս քարերին,
Մեր կամքերը հաղթող ու մեր քրախնքը հորդ,
Արջունը լվացին հին դարերի:

Նրանք չերգում են, — մենք՝ մարտիկներ քրտնաթոր,
Սոցիալիզմի շունչը մեր հեքերում,
Նրա արևը վառ, նրա կամքը հաղթող,
Նրա սիրան ե խփում մեր չերգերում:

Ու կանգնած եմ ահա մի բլրակի վրա,
Դեմս տարածվում ե քաղաքը մեր,
Յեվ գիշերն ե փռել կապույտ մահուղն իրա,
Ու թարթում են հաղար լուսեղ աչքեր:

ՑԵՍ ՀԻՇՈՒՄ ԵՍ ՆՈՐԻՑ

Յես հիշում եմ նորից չերկիրն այն,
Գիշերները խաղաղ, արծաթագոծ,
Բանվորական զվարթ բալալայկան,
Վոր չերգով լցնում եր տուն ու փողոց...
Յես հիշում եմ հեռու չերկիրն այն...

Յեվ տափաստաններն եմ հիշում անձիր
Իրենց տերերի լայն սրտի նման,
Յեվ կիրգիզներին այն արևասիրտ
Խփած նրանց վրա հազար վրան...
Այն տափաստաններն եմ հիշում անձիր...

Յեվ փայտե տների շարքը բազում,
Յեվ աղյուսաշար շենքերը նոր,
Ու անթիվ սրտեր են ինձ հետ խոսում,
Մեր բանակները հազարավոր
Այն փայտե տների միջև բազում...

Յեվ այն ծխածանը բազմաչերանդ,
Կարմրալույս այն աստղը հինգ թևանի,
Յես տեսնում եմ կախված ահա նրանց
Նորահառույց հսկա գործարանից...
Ո՛ր, այն ծխածանը բազմաչերանդ:

Յեվ լույսերից այն վառ՝ նայում են ինձ
Ծիծաղախինդ դեմքեր բանվորական,
Վորոնք կյանք են տվել գործարանին,
Ու տաք քրտինքներ են թափել այնքան,
Նրանք՝ լույսերից վառ նայում են ինձ...

Յես հիշում եմ նորից չերկիրն այն,
Գիշերները խաղաղ, արծաթագոծ,
Բանվորական զվարթ բալալայկան,
Վոր չերգով լցնում եր տուն ու փողոց...
Յես հիշում եմ հեռու չերկիրն այն...

1932 թ. ոգոստոս

Ա Ռ Ա Վ Ո Տ

Պայծառացիր, ան առավոտ,
Յերկիր, խմիր ցոլքն արևի,
Կյանք առնեն թող արտ ու արոտ
Յեվ այգիները խաղողի:

Մեր դաշտերում համայնական
Թող հնչի յերգը լիաթոք,
Փող հնչի թող իմ հաղթական,
Իմ նոր լերկրում արևակող:

Վոսկի հասկեր վոսկի բերքով,
Բամբակ լինի՝ ձյունե սավան,
Վողկույզները քաղվեն յերգով
Այգիներում համայնական:

Պայծառացիր, ան առավոտ,
Պայծառացիր ու արևիր,
Մեր դաշտերը համայնական
Սպասում են քո բարեին:

1932 թ. ապրիլ

Ք Ա Ղ Ա Ք Ը

I

Այս քաղաքում տեսել եմ յես անթափանց մի գիշեր,
Յեվ տնակներ կիսաքանդ անպատուհան ու անդուռ,
Վորոնց վրա ծեր ժամի զանգի զողանջն ե իջել,
Ու ծանրացել վորպես մութ, վորպես անեծք, վորպես բուռ:

Յեվ աչքերի նման կույր՝ յես տեսել եմ ամեն որ
Անապակի, ավերակ պատուհանները մռայլ,
Ու նրանց դեմ վոռնացող պտուտահողմն ահավոր,
Վոր իջնում եր լեռներից վորպես սոված, դաժան գայլ:

Յեվ սովալլուկ ու դժգույն մանուկներ եմ տեսել յես,
Ու մերկությունը նրանց, վոր լիզում եր ցուրտ քամին,
Նրանց կյանքն եր շարտել աշնան սաղարթների պես,
Վոր այդ սաղարթների հետ հողմը քշի ու տանի:

Ու տեսել եմ գինեբույր շարանները կառքերի,
Ձուռնի նվոց միալար, վորպես սոված վորբի լաց,
Վոր հնչում եր հին Գյումրու հեռու, խարխուլ թաղերից
Ու արձագանք՝ եր տալիս հողիներին մեջ հարբած:

Հիմա ձեր են, ել չկան, ինչ տեսել եմ յես առաջ,
Մնացել են ժամերի սիլուետները կիսաքանդ,
Յեվ կուզիկ մի քահանա, վորպես զանգի մի զողանջ,
Վորոնք մեր մեծ կառուցման քարերի տակ կմնան:

II

Ո՛ր, քաղաք իմ, քեզ այնպես հարազատ եմ լես,
Մտերիմ եմ քո տաշած ամեն մի քարերին,
Վարդազույն մի խնդություն տուֆ քարերիդ պես,
Ասես ներկել ե կյանքիս տասնե մեկ տարին:

Վարդազույն մի խնդություն ջահել իմ հողում՝
Յես շրջել եմ ամեն ոք փողոցները քո,
Դու ապրել ես, շնչել ես ինձ հետ, իմ վերզում,
Ու հարբել ես խնդությամբ ամեն յերեկո:

Շենքերը, վոր հիմա կան, փողոցները նոր,
Կապույտ գոտին ջրանցքի, կայանը լույսի,
Որինդ են սփռել իմ հողում, վոր այնտեղ մի ոք
Հյուզաթաթալ յերգերի մի առու հոսի:

Շենքերը, վոր հիմա կան, փողոցները նոր,
Բարձրացել են ու աճել աչքերիս առաջ,
Յեվ ազմուկը կառուցման բարձրացել ե վոր,
Յես լսել եմ վորպես վերգ, նոր կյանքի դողանջ:

Ու տարերքը շարժել ե վերկիրը մի ոք,
Որորվիլ են շենքերիդ կատարները վերք,
Բայց անվհատ ու համառ շառաչունով նոր,
Մտաիդ անհուն յեռանդով կանչել ես. — լելեք:

Ու յելել են հաղթական ջոկատները մեր,
Կառուցման նոր մարտերի, նոր կովի համար,

Շաղախել են քրտինքով ս, այնքան քարեր,
Ու իրենց կամքն են թողել նրանց մեջ անմար:

Ո՛ր, քաղաք իմ, քեզ այնպես հարազատ եմ լես,
Ու մտերիմ քո տաշած ամեն մի քարին,
Վարդազույն մի խնդություն տուֆ քարերիդ պես,
Ասես ներկել ե կյանքիս տասնեմեկ տարին:

III

Փոխվել ե քո պատկերը ու փոխվել ես դու,
 Ու փոխվել ե քո մեջ նա՝ կյանքը հարածուն,
 Կառուցվել ես յերկնի-տակ ու մեր ջինջ հոգում,
 Ել զանգակները ժամի քո զեմ չեն հաջում:

Ու չի լիջնում քեզ վրա միտակ յերեկո,
 Ու քո սրտում չի նվում լացը վորբերի,
 Պաշտառ, պայծառ-աստղերի անձրևի ներքո,
 Յերեկոն քո լուսեղեն վարդեր կբերի:

Կիջնի անա յերեկոն, կբացվեն լույսի
 Շուշանաթերթ լամպերի կոկոնները վառ,
 Կնայի քեզ յերկնքից մի գունատ լուսին,
 Վոր անդոր ե աշխարհին լույս տալու համար:

Կնայի քեզ յերկնքից մի գունատ լուսին,
 Կիջնի անա յերեկոն, գիշեր կլինի,
 Մութը վրան կխփի լեռները ուսին,
 Յեղ լույսերի սարսափից քաղաք չի մտնի:

Կշառաչի քաղաքում կյանքը, կը յեռա,
 Ռազիոնների քաղցրալուր նվագների տակ,
 Ու զիններույր պանդուկի սանդուղքի վրա՝
 Վոչ մի սրտում չի խրվի Ֆիննական դանակ:

Փոխվել ե քո պատկերը, փոխվել ե այնքան,
 Ու փոխվել ե քեզ հետ նա՝ կյանքը հարածուն,
 Ու հիմա քեզ լուսեղեն ու զվարթաձայն,
 Ո՞, քաղաք լմ, վաղվա նոր սրերն են կանչում:

1932 թ. գեկտեմբեր 28.

ԱՆՎԱՐՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

I

Յեղել ե յերկիր մի
 Արշունոտ քարերով,
 Մչքը արցունքով լի,
 Միրտը արշունի ծով:
 Յեղել ե յերկիր մի,
 Շնչել ե դարերով,
 Ու չար դավերով լի՝
 Արշունոտ տերերով:

Իշխել են այդ յերկրում
 Վասալ ու թագավոր...
 (Պատմությունն ե գրում
 Յերկաթագրերով),
 Ծծել են յեղեգով
 Աշտարակի գինի,
 Ժողովրդի հեքով՝
 Նրա արյան գույնի:

Արծաթյա թամբերով,
 Զիերով ասպաղեն,
 Քառասմբակ զոփել են
 Անտառներ ու ձորեր,
 Վորսիլ են յեղջերու,

Երեներ ու վարադ,
Դատարկել են գինու
Մառաններ ու կարաս:

Պատմությունն է խոսում
Դարերի յետևից,
Ժամանակն է հոսում
Ընթացքով արևի,
Յեղել է յերկիր մի,
Արյունոտ քարերով,
Ու չար դավերով և՛
Արյունոտ տերերով:

II

Ապրել են այդ յերկրում
Գետնաբնակ մարդիկ,
Ու կերել են կավի
Ամանների միջից.
Ու տվել են հողին
Յեվ արյուն և քրտինք,
Կերակրել է նրանց
Հողը՝ վորպես ստինք:

Պատմությունն է խոսում
Դարերի յետևից,
Նա գովում է յերկրի
Ջորինները ազնիվ,
Բայց չի գրում ինչպես
Քշել են այրուձի:

Խլել ժողովրդից
Բաժինն առյուծի:

Յեվ յեղել է մի որ,
Շինվել է մի քաղաք,
Ասում են՝ թե այնտեղ,
Արքան Արշակունի
Կատարել է գողի,
Ավազակի հավաք,
Յեվ կոչել է նրան՝
Արշակավան քաղաք:

Յեվ ո՞վ գիտե այնտեղ,
Ավանում Արշակի,
Վոր կոչվել է քաղաք
Դողի, ավազակի,
Չեն աքսորվել անմեղ
Հողիները խիզախ՝
Տերերի դեմ ուղղված
Վորպես հազար նիզակ:

Պատմությունն է խոսել
Դարերի յետևից,
Ու դարերն են հոսել
Ընթացքով արևի,
Յեկել են նոր դարեր,
Նոր իշխողներ, ու նոր՝
Արյուն քրտինքով և՛
Մի դասակարգ հզոր:

Տերերը նոր՝ զինված
 Բռնութեամբ դարերի,
 Խոսել են արշունոտ
 Մառազներէ վորոտով,
 Ու դասակարգը մեր՝
 Զայրույթով դարերի՝
 Վռնդել ե նրանց,
 Փախցրել ե վոտով:

Ու մնում ե հիմա
 Իբրև հուշ հների՝
 Մի Զվարթնոց մուսլ,
 Պաշարարի մամոտ,
 Յեւ կճուճներ կալի,
 Մի պատմութեան ազոտ,
 Վոր խոսում են քեզ հետ
 Տարտամ ու համառոտ:

III

Այժմ կա յերկիր մի,
 Ուր բացվել ե դարուն,
 Հայացքը խինդով լի՝
 Հառել ե նա հեռու.
 Իշխում ե այդ յերկրում
 Յեւ խրոխտ ե անպարտ,
 Արևներ կառուցող
 Մի համառ դասակարգ:

Զորերը՝ ուր նրանք
 Դուրս են յեկել վորսի,
 Վողողել ենք անափ
 Հեղեղներով լույսի.
 Նրանց մեջ մենք վոսկի
 Արևներ ենք վառել,
 Յերկիրը ցանցել են
 Բյուր ելեկարոլարեր:

Դարձել ե այդ յերկրում
 Իրախնքը հորդ, վարար,
 Ժայռերի վորոտում՝
 Յերկրի ծիծաղը վառ.
 Փրփրերախ քրքիջով
 Զրերը սրընթաց,
 Թունեխների միջով
 Թափով իջնում են ցած:

Յերկրում այդ հնորյա
 Սուլիչներ են կանչում,
 Գնացքներ են փնչում,
 Ռազիոններ են հնչում,
 Յերկրում այդ յիջնում են
 Վարդակարմիր տներ,
 Նրանց քարերը մենք
 Հուլղերով ենք դրել:

Աճում ե չերկիր մի,
 Վոր աչքերով լուսե,
 Հողիններում հիմի
 Բյուր չերգեր ե հյուսել:
 Նրան արև ու սեր,
 Վոսկի որեր ու կյանք,—
 Բոցավառ վողջուչն քեզ,
 Բանվոր դասակարգ:

1932 թ. հունիս

Ա 3 8

Տեսա Միբերը չես,
 Կուզնեցկատույը մեծ,
 Վիթխարի դոմնաներ
 Ու մարդիկ:
 Հաղթանակ պեսա չես,
 Ու հալոցք մետաղի,
 Մետաղի պես տոկուն
 Բյուր մարտիկ:

Տեսա հերոսական
 Աչն մեծ բանակը մեր,
 Խանդավառ տեսա չես
 Պայքարում:
 Նրանց կամքը հաղթող,
 Յեվ ուժը տեսա չես
 Ամեն մի աղյուսում
 Ու քարում:

Աչնանգ գիշերը չես
 Ցերեկի պես տեսա,
 Ցերեկը՝ նու յնպես
 Ցերեկի,
 Աշխատանքը համառ,
 Կյանքը անմար տեսա
 Աոցխալխատական
 Վերեկքի:

Տայգաները կտրած
Մարդիկ տեսա աճյուղեզ,
Վորոնք լեկել ելին
Պայքարի,
Վորոնք յեկել ելին
Իրենց ուժը տալու
Սիրելի յերկաթին
Ու քարին:

Կիրգիզները հզոր
Բանակներ տեսա յես,
Քրտնած ճակատներով
Յեվ արի,
Աչքերի մեջ նրանց
Ուժի կրակ տեսա,
Զայների մեջ կամքը
Վիթխարի:

Յեվ այս բոլորի մեջ
Յես արևը տեսա
Սոցիալիստական
Սիրելի,
Սիրտս վառվեց նրա
Կրակներով անմար,
Բարեները ավի
Իմ յերկրի:

1931 թ. հոկտեմբեր

ԱՓԵՐՈՎ

I

Արևելյան այս քաղաքում
Յես շրջում եմ նորից ահա,
Դեմից ծոփն ե աղաղակում
Դառնաթախի՞մ յերգը իրա:

— Ծնվ, ինչո՞ւ յես այդպես հեծում.
Ո՞վ վրդովեց հանդիսաբ քո,
Վոր ափերդ ես ահա ծեծում
Յեվ առավոտ, և՛ յերեկո:

Կապույտ ջրեր ունես՝ փերուզ,
Յեվ կոհակներ ագամանդե,
Ի՞նչ վողբում ես իզուր, իզուր,
Յեվ ափերդ ես ուզում քանդել:

... Առաջ պոետն եր հեկեկում
Քո ալեծուփ սրտի հանդեպ,
Յեվ ուզում եր ցափն իր տրտում
Քառնել քո ջինջ ջրերի հետ:

Հիմա դու յես ախուր հեծում,
Արցունքներդ՝ անթիվ կոհակ,
Բաց ափերդ ես ահա ծեծում
Արևի ջինջ շողերի տակ:

II

Շոյեց քամին կուրծքը ծովի,
Արևն իջավ սարի յետև,
Յեզ համբույրից խանդոտ հովի
Կրկին հուզվեց ծովը թեթև:

— Յես վնասում եմ ալիքներն իմ,
Իմ ջրերը կապույտ փերուզ,
Փրփուրներս անցած ու հին
Ու յերգերը իմ նրբահյուս:

Յեկան մի որ մարդիկ նավթի,
Խռովեցին հողիս խաղաղ,
Վոնց վոր մարդը վշտից հարբի՝
Այլպես ե, տես, հողիս անա:

Իմ փերուզն ջրերի մեջ
Նավերով լի հող թափեցին,
Վիշտս դարձավ նավթի ջրվեժ,
Իսկ ջրերս՝ ցամաքեցին:

Տես, կանգնած ե այնտեղ հիմա
Յամաքի մի հսկա կտոր,
Մեքենաներ նրա վրա,
Բուրգեր անթիվ, լույսեր, մոտոր...

Ու ամեն որ ափից անա
Նավթահաններն այն խորաքաշ,
Ծիծաղում են վշտիս վրա,
Ծծում արյունն իմ կանաչ:

Յեզ ցամաքը, վոր հիմա կա,
Բուրգերի խառ յերթը միջին,
Կանգնել ե իմ կրծքի վրա,
Ու կոչվում ե բուխտ Իլիչի...

III

Շոյեց քամին կուրծքը ծովի,
Կապույտ մութը փովեց թեթև,
Ու համբույրից խանդոտ հովի՝
Դողաց ծովը վորպես տերև:

— Ծով, իզուր ես դու հեծեծում,
Սոցիալիզմի կյանքի համար
Յերկիրն առատ նավթ ե ուղում,
Նավթի ծովեր հորդ ու վարար:

Մենք բանտեցինք ջրերը քո,
Յերակներդ բացինք մեր դեմ,
Մեքենայի անդուլ հեքով՝
Նավթ ենք հանում հիմա թեթև:

Թափանցեցինք խորքը հողուդ,
Նավթի համար, կյանքի համար,
Թեկուզ ջրերդ անոգուս
Ել չլինեն հորդ ու վարար:

Ծով, իզուր ես դու հեծեծում,
Սոցիալիզմի կովում համար

Դու ափերդ ես ահա ծեծում,
Իսկ մեր կյանքը՝ նրա համար:

Մենք վառում ենք հույսեր, լույսեր,
Հույզեր վոսկի ու արևառ,
Արևներ ենք մենք կառուցել
Սոցիալիզմի կյանքի համար:

... Շոյեց քամին կուրծքը ծովի,
Լուսինն ընկավ ծովը՝ թեթև,
Ու համբույրից խանդոտ հովի՝
Դողաց ծովը վորպես տերև:

Ու ամեն որ այս քաղաքում,
Յես շրջում եմ նորից ահա,
Դեմից ծովն է ազազակում՝
Դառնաթախիժ յերգը իրա:

Բագու
1932 թ. մարտ

Յ Ե Ր Գ Հ Ա Ղ Յ Ա Ն Ա Կ Ի

Անդրֆեդերացիայի 10-ամյակին

Մենք վառում ենք այս գիշեր
Բոլոր լույսերը չերկրի,
Բոլոր հույսերը պաշտառ
Մենք վառում ենք այս գիշեր:
Աշխատավոր մարդկուխչուն,
Թող ձեր սրտերը բերկրեն,
Չունի այնքան պաշտառ եջ,
Վոչ մի ստար պատմութուն:

Տես, նաչում են Չագեսի
Բլուր աչքերը լուսարձակ,
Կասպիական լույսերի
Շողերն ընկան ջրերին,
Չորագեսի վարսերից
Լույս է ծորում ձորերին,
Բանաքուից, Ռիոնից
Յեղնում են դուչգ արեգակ:

Այդ մեր սրտերն են լուսի,
Վոր նաչում են իրարու,
Այդ մեր կամքերը հաստատ,
Վոր մենք իրար ենք հչուսել,
Մենք, վոր չերեկ «Թշնամի»,

Արջան գետեր թափեցինք,
Այսօր իրար հետ մեկտեղ՝
Արևներ ենք կառուցել:

Այսօր ուրիշ մարտերի,
Պաշարների չենք չելել,
Մենք բերել ենք մեր չերկրին
Պաղատություն ու հանգիստ,
Ու տենչում ենք հիմա մենք,
Պաշարներով ամենի՝
Վուկեփիթիթ, կենսատու
Սոցիալիզմի արևին:

Ու գալիս ե տհա նա
Հմայքներով իր լուսե.
Նրա համար չերկաթե
Ճամբաներ ենք կառուցել,
Ելեքարական վարդերի
Վառ ծաղկոցներ ենք հլուսել,
Համայնական արտերի
Թավիշ կանաչն ենք բացել:

Քրտինքով ենք շաղախել
Դժվար ճամբերը նրա,
Պաշարել ենք, տոկացել՝
Նրա արևի համար,
Հուսացել ենք, վոր կդա
Ու հալացքն իր պաշտառ
Կփռի մեր դաշտերի
Ու հին հլուղերի վրա:

Յեղ գալիս ե տհա նա.
Ամեն առափոա, ծեղկն,
Աչն, վոր ձգվում ե ուժգին
Սուբիչների ձայնը զիլ՝
Հաղթական կանչն ե նրա,
Աչն, վոր բարախում են հար
Գործարանները հսկա՝
Վտարերի ձայնն ե նրա,

Աչն, վոր հեռւմ ենք համառ
Աշխատանքի աղմուկում,
Ու գործում ենք անպազար,
Այդ նրա հեքն ե անմար,
Աչն, վոր խնդութչամբ հարբած
Մենք չերգում ենք սրտաբաց՝
Այդ նրա չերգն ե հուզիչ՝
Մեր սրտերի մեջ հլուսած...

.

Բայց սպասեք... սպասեք...
Սհա չեխում են նրանք
Ճակատներով արնավառ,
Հալացքներով թափանցող,
Այդ նրանք են, վոր ընկան
Պաշարներում ամենի,
Վորոնք ձգտում ելին վառ
Սոցիալիզմի արևին:

Տես, կարմրեց ավազուս
 Անապատը կրակից,
 Նրանց ձեռներն ահա
 Միանգամից բարձրացան,
 Կասպիական ջրերը
 Մոնչացին ահաբեկ...
 Յերկաթաթև մի թռչուն
 Թալրատալով ընկավ ցած...

Այդ նրանք են, վոր ընկան
 Պաշարներում ամենի,
 Վորոնք ձգտում ելին վառ
 Մոցիալիզմի արևին...
 — Շիրիմների վրա ձեր,
 Հերոսական ընկերներ,
 Մենք կառուցում ենք հիմա
 Մոցիալիզմ ու հուշարձան...

Տես, վառվում են Չազեսի
 Բլուր աչքերը լուսարձակ,
 Կասպիական լույսերի
 Փալն ընկավ ջրերին,
 Չորագեսի վարսերից
 Լույս է ծորում ձորերին,
 Քանաքեռից, Ռիոնից
 Յեղում են դուչգ արեգակ:

1932 թ. մարտ

Վ Ե Ր Ն Ա Շ Ե Ն Ք

ՊՈՒՏԸ

Դասակարգի անձուն հուզումներով լեցուն,
Նա վողջ մի տարերք և անթիվ չերգերով լի,
Նրա չերգը վորպես միլիոն սրտի լեզու՝
Հնչում և սրտերում ու վողջ աշխարհով մի:

Յեվ մերթ խաղաղ և նա՛ պոետի ջինջ հոգին,
Ու մերթ մոռնում և, վորպես անզուսպ ովկյան,
Յերբ պատրաստվում և նա ծնունդ տալ իր չերգին,
Ո՛ր, անհանգիստ և նա իր հուշգրերով աչնքան:

Ո՛ր, անհանգիստ և նա, վորպես հուզված տարերք,
Ինչպես չերկինք-չերկիր, վոր խառնվում են իրար,
Ինչպես ծովն և հնչում մի շառաչուն համերգ,
Փշրում բոլոր ալիքներ իր ափերի վրա:

Նա մոռչլ և լինում իր չերկունքի պահին,
Նրա չերկինք հոգին ամպում և խոհերով,
Յեվ հուշգրի հախուռն ու ամենի քամին
Գալարվում և նրա ծով սրտի ափերով:

Յեվ սուր զիկզակներով կաշձակում են աչնտեղ
Մտքերը պոետի ու հուշգրին խփվում,
Ու հանկարծ իր սրտի շառաչունով անեղ
Վոգեշունչ չերգերի անձրևներ են թափում:

Յեւ վերգերի աչք հորդ անձրևներից հեռու
 Խաղաղվում ե կրկին վողջ տարերքը նրա,
 Պարուրվում ե պայծառ նրա հոգին խինդով,
 Ինչպես արև չեղնի լուրթ չերկնքի վրա:

Յեւ ինչպես նրբահյուս ծիածանի աղեղ,
 Վոր կախվում ե չերկնի կապույտներից անհուն,
 Խաղաղվում ե աչքպես նրա հոգին անեղ
 Ու ժպիտն ե փայլում աչքերի մեջ խոհուն:

1932 թ. ոգոստոս

ԴԱՇՆԱԿԱԶԱՐ ՅԵՐԵՄԱ

Նվազում ես, աղջիկս, դաշնակահար չերեխա,
 Դաշնակահար չերեխա, հնչյունների սիրահար,
 Հնչյուններիդ անձրևը սրախ վրա թող տեղա,
 Վոր արթնանան նրա մեջ նոր հույզերն իմ անհամար:

Հարվածային քո հայրը աջնտեղ կուզում ե անա,
 Աջնտեղ կուզում ե անա չերկաթի ու քարի հեռ,
 Հարվածային քո հայրը համառորեն ու անան,
 Նա ձգտում ե մեր կյանքի չերջանկությանը հավետ:

Նա ձգտում ե մեր կյանքի չերջանկությանը հավետ,
 Դու նվազիր, աղջիկս, դաշնակահար չերեխա,
 Անա բացվել ե մեր դեմ մի նար կյանքի արահեռ,
 Հնչյուններիդ անձրևը սրախ վրա թող տեղա:

Ո՛ր, մենք չելել ենք խոնավ նկուղներից, խավարից,
 Հարվածային քո հայրը աջնտեղ կուզում ե անա,
 Վոր նոր կյանքի արևը մեր սրտերում վարարի,—
 Իսկ դու, իսկ դու նվազիր, դաշնակահար չերեխա:

Մենք դեռ պետք ե տիրանանք բարձունքները
 գիտության,
 Բարձունքները գիտության և արվեստի ու չերգի՝
 Մեր դեմ, աղջիկս, մեր դեմ դեռ անառիկ բերդեր կան,
 Դաշնակահար մանկիկս, դու նվազիր, նվազիր...

1932 թ. հուլիս

Բ Ա Լ Լ Ա Դ

Այս փողոցում, ճամբի վրա,
Կիսամուկին թե լույսին,
Աշխատում են հայր ու աղա
Ամբողջ որը միասին:

Ալեորը խոհերի հետ
Շարում է քարը քարի,
Վորդին ջահել ճարտարապետ՝
Ավարտել է այս տարի:

— Հայրիկ, պատը թեք է գնում,
Նայիր, գիծը ուր մնաց.
Հայրիկ, արնոգ, չես ենք մտում,
Տես, արևը թեքվեց ցած:

Զվարթանում է ծերունին,
Սինդ է վառվում իր հողում,
— Ճարտարապետ վորդի ունեմ,
Մատաղ լինեմ ջինջ հողուն...

— Հայրիկ, չեիլ ենք մրցության
Կառուցումի մեծ պայքարում,
Վոր մեր կամքը՝ լի խնդությամբ
Անմահանա այս քարում:

Յեզ ծերունին թափ է առնում,
Սառնում է ցեխը քարին,
Նաղախում է քարաշարում
Ժպիտներն իր բարի:

— Հայրիկ, սիրտս չի համբերում,
Ո՛ւժ տուր, թնփ տուր քո ձեռքին,
Յես առաջին քարն եմ դնում
Սոցիալիզմի մեծ շենքին...

Յեզ ամեն որ, ճամբի վրա,
Կիսամուկին թե լույսին՝
Աշխատում են հայր ու աղա
Ամբողջ որը միասին:

1932 թ. սեպտեմբեր.

Ժ Ա Մ Ա Պ Ա Ն Ը

Փողոցները խաչաձևող
 Նորակառույց շենքերի մոտ,
 Կա մի փոքրիկ բացատ փողոց՝
 Փոշխաշունչ ու արևոտ:

Աչնտեղ ահա, ճամբամիջին,
 Ուր անցնում են կառք ու ձիեր,
 Ուր արձանն է մեծ Իլիչի,
 Կանգնած է մի միլիցիոններ:

Զահել է նա, ժիր ու զվարթ,
 Ու մոխրագույն շորեր հագին,
 Գլխին փափուկ մի սաղավարտ,
 Մի փոքրիկ փալտ ունի ձեռքին:

Մերթ ալտո լե անցնում մոտով,
 Մերթ աղմկոտ մի սալն, կամ կառք,
 Նա իր ձեռքի փոքրիկ փայտով՝
 Անձայն տալիս է հրահանգ:

Յեվ նայում է հեռու, հեռու,
 Ուղիղ կանգնած պոստի վրա,
 Յեվ հիշում է ինչպես հերու
 Պետը Մոսկով ղրկեց իրան:

Տեսնում է նա շենքեր հսկա,
 Աղմկահուլզ շարժում, հոխոդ,
 Հազար ալտո ճամբի վրա,
 Տրամվայի զվարթ դղիրդ:

Այդ բոլորը ձուլված ի մի՝
 Մի ընդհանուր սնափ ժխոր,
 Կարծես հնչող համերգ լինի՝
 Ու ժամապահը դիրիժյոր:

Յեվ նայում է հեռու ելի,
 Ու թվում է նրան ահա՝
 Հազար ալտո անցան հիմի
 Իրեն հանձնած պոստի վրա:

Ու գալիս են տրամվայներ,
 Զրնգոցով անցնում արագ,
 Շուրջը հսկա քարե շենքեր,
 Պայծառադեմ ու բազմահարկ:

Տեսնում է նա ճամբին ահա
 Անցուզարձի ծով ալեկոծ,
 Ինքը կանգնած պոստի վրա,
 Դեմն անձայր, լալն մի փողոց:

Յեվ ասֆալտե փողոցում այդ,
 Ուր թնդում է խուլ մի ժխոր,
 Նա շարժում է մի փոքրիկ փալտ,
 Վորպես հմուտ մի դիրիժյոր:

Բայց ժպտում ե մեկը նրան,
Այդ մեծ արձանն ե կենինի,
Վոր ասում ե կարծես իրան.
— Ե՛կ, ժամապահ, այդ կլինի:

ՓԼՈՒԶՈՒՄ

Ուարիլի ե հնակառուց շենքը քո հոգու,
Յեվ հույզերի պարտեղը հին թոշնում ե ախտեղ,
Մի անհայտ ձեռք չար հույզերիդ թուփերն ե պոկում,
Ու ցանում ե նոր վարդերի սերմերը լուսեղ:

Ժամանակի հողմը անեղ քշում ե անա,
Թերթիկները հին վարդերի՝ չար ձեռքով ցանված,
Աղոթքները, վոր իջել են քո հոգու վրա,
Ղողանջները ժամի դանդի արյունով հարբած:

Յեվ բռնության ու քաղցի տակ ծնված քո չեսի
Զվարթ մահերգն ե աղմկում, վողջունիլը նրան,
Թող մեռնի նա, պոկվի նա ել հոգուդ պարտեղից,
Նայիր՝ մի նոր կյանք ե շողում աշխարհի վրա:

Նայիր, մի նոր կյանք ե շողում աշխարհի վրա,
Ու փչում ե հնակառուց շենքը քո հոգու,
Համայնական կյանքի ձայնը լսում եմ անա
Նոր հույզերի ու նոր չերգի քաղցը համերգում:

ՍԻՍՏՈՆԻԱ ԱՌԱՅ ԼԱՐԵՐԻ

Դադարիր, ուղիս, դադարիր,
Բավական է սոնատը Բախի,
Նվագիր սիմֆոնիան մեր դարի,
Վոր սրտի նման բարախի:

Նվագիր առանց լարերի,
Վոդեշունչ սիմֆոնիան հրաշագեղ,
Միացրու թելերդ յերկրին՝
Ներդաշնակ հնչյուններ կան այնտեղ:

Թող քամու շուրթերի տակ հնչող,
Ելեքարոլարերն անխորտակ,
Հույզերի քաղցրալուր կանչով՝
Նվագեն վորպես բյուր ջութակ:

Թող աշխույժ կանչերը գնացքի,
Վորպես բյուր ուղիտ ալիքներ՝
Իրենց հեքը խառնեն նվագին,
Ու հնչեն վորպես սրինգներ:

Պղնձե փողերի փոխարեն
Թող հնչեն գուգոկներն ահա,
Վոր հալացքը յերկնին են հառել,
Ու քաղցր ձայնակցում են իրար:

Զրնդուն ձայները ուղիների,
Վորպես յերկաթի ծիծաղներ,
Թող ձուլվեն ձայների հեյզերին,
Ու դառնան աշխույժ ծնծղաներ:

Յե՛վ թնդյունը պայթող ժայռերի
Վորպես բամբ թմբուկներ հնչեն թող,
Հարվածները թուշող քարերի՝
Լինեն թող թմբուկներ խփող:

Միալար կանչերը ջրերի
Դայլալեն, վորպես ֆլեյտա,
Ո՛ր, ուղիս, նվագիր մեր դարի
Վոդեշունչ, հղոր սիմֆոնիան:

Դիզելների հեքը միալար,
Ավտոների վազքը սրընթաց,
Այդ յերգին ձուլվեն ու միանան,
Վորպես խապոտ մի կոնտրաբաս:

Յե՛վ այդ բոլորի մեջ ահա
Սոցիալիզմ կառուցող մեխիոնի
Հույզերի մեկոդիան յերևա՝
Վոդեշունչ ձայների այդ ֆոնին:

Այդ հուզիչ հնչյունների վրա
Թող արևը լինի ֆերմատոտ,
Ժամանակը քայլերով իրա՝
Բարախի վորպես ստակատոտ:

Դադարիր, ուղի՛ն, դադարիր,
 Բավական է սո՛նատը Բախի,
 Նվազիր սիմֆոնիան մեր դարի,
 Վոր սրտի նման բարախի...

1932 թ. հունիս

Գ Ի Շ Ե Ր Ա Մ Ո Ւ Տ

Ամպի ծվենները վառվում են ահա,
 Հանգչում է արևը, հալչում է ասեա,
 Ու մութը նստել է սարերի վրա,
 Խոհուն են սարերը, սարերը ինձ պես:

Խոհուն են սարերը, դարերը ուսած
 Հանգչում է արևը, արևը ահա,
 Ու մութը թափվում է հողի պես դեռ թաց,
 Մեռած մի ցերեկի դադաղի վրա:

Ու մութը թափվում է հողի պես դեռ թաց,
 Ամպի ծվենները մարել են ահա,
 Ե՛ր լեռան կատարից լուսինն ընկավ ցած,
 Ու փշրվեց կարծես աշխարհի վրա:

Ել չկա ցերեկը, գիշեր է իմ դեմ,
 Խոհուն են սարերը, դարերը ուսած,
 Յերկնքի ջահերը, ջահերն արդեն
 Վառվում են: Գիշերը ի՞նչ նուրբ է հյուսած:

ՎԵՐՉԱԼՈՒՅԱ

Վ Ե Բ Ջ Ա Լ Ո Ւ Յ Ս

Մորթվեց արեգակը աստեղ, արևմուտքում,
Դարերի սակ ճկում՝ մի լեռան սապատին,
Ամպերի սպիտակ կուրծքն է արյունոտում
Արյան շատրվանն այն բոցակաթիլ:
Յեվ նետում է մի ձեռք անա դեպի լերկինք
Արյունոտ մի դաշույն՝ իբրև լուսնի մահիկ:

Այնտեղ վերջալույս է, արևն է մահանում,
Յես զգում եմ նրա հեքը մահացողի:
Այնտեղ վերջալույս է. և աստղերն են լեխում,
Վորպես արցունքները մահը վողբացողի:
Այնտեղ վերջալույս է. լերկինքը սգավոր
Իր փերուզե դեմքին քաշում է սև մի քող:

Յեվ լիջնում է մութը ու հողմն է բարձրանում
Փեղերը քսելով արտերին ու հողին,
Յեվ գիշերն է անա թանձրությամբ ծանրանում,
Յերկիրը մտնում է խավար մի անկողին,
Մութի մեջ դժվում է սիրուեալ մի լեռան՝
Վորպես արեգակի մի անշուք գերեզման:

Իսց դեռ մարմրում է իմ դեմ մի վերջալույս
Արևմուտքի մուսլ, խավար ֆոնի վրա,
Այնտեղ հիվանդ մի մարդ գալարվում է անհույս,

Յեզ գեռ արյունոտ են շրթունքները նրա.
Յեզ գեռ անվում է նա կյանքերով մարդկային,
Ու արյուն է կաթում ժանիքներից իրա:

Այնտեղ մեռնում է նա՝ տիրանը աշխարհի,
Մռայլ քաղաքների տիրակալը դեղին,
Նա՝ վոր ցանկանում է հողագունդը վառի,
Իրըն հույսը վերջին, դալարքը մեռնողի,
Նա՝ վոր ցանկանում է բոցերով հրդեհի
Բանալ արյունադավ փրկության մի ուղի:

Այնտեղ վերջալույս է, հոգեվարք է այնտեղ,
Քաղաքների թանձր մշուշներից անա
Յես տեսնում եմ—բարձր ծխաններից արդեն
Ձի բարձրանում ժահրոտ, թունոտ շունչը նրա.
Յեզ թույլ են բարախում մոտոր ու գործարան՝
Այդ մահացող մարդու խարխուլ սրտի նման:

Յես տեսնում եմ այնտեղ—անա շրջում է նա՝
Մի ուրվական լուսե, բազմութուններ խրոխտ,
Վոր չոքել են կարծես նրա կրծքի վրա՝
Վորպես մահասարսուռ և անողոք մի բոթ,
Յեզ փորվում է այնտեղ մի անդունդ անսահման
Մահացողի անհուշ ու խորունկ գերեզման:

Վաղը կմեռնի նա այնտեղ, արևուտքում,
Մռայլ քաղաքների տիրակալը դեղին,
Վոր գեռ հազար կյանքեր ու սրտեր է ուտում

Իր՝ մեռնողի անհուշ՝ դալարքներով վերջին.
Վաղը կմեռնի նա: Յեզ մահ՛ջ տողերն իմ այս
Գուցե հնչեն փորպես զվարթաձայն մահազդ:

Այնտեղ վերջալույս է: Բայց տեսնում եմ անա,
Վաղվա բոցաճառագ արեգակը չքնաղ
Վորպես արու առյուծ կանգնած լեռան վրա,
Թափ է տալիս հալարա վոսկի բաշը իրա.
Նա մարդկային կյանքի վոսկեղարն է ուսել,
Հրդեհվում են այնտեղ պալձառ արշալույսներ:

1932 թ. սեպտեմբեր

ՀԵՆԱԿՆԵՐԸ

Հողագնդի անթիվ քաղաքներում բոլոր,
Յեվ գյուղերում հեռին, ճամբաների վրա,
Յերբ յեյնում ե վոսկի արեգակը բոսոր
Վոսկեղերձան բաշով կարմիր ձիու նման՝
Դադադաձայն, վորպես մահասարսուռ քայլերգ,
Դոփում են գեախնը միլիոն կենտ հենակներ:

Հենակներին կրթնած՝ արագիլներ վորպես,
Մի վոտնանի մարդիկ աչքերի մեջ ցասում,
Հողիներում նրանց բյուր հույրերը հրկեզ,
Յեվ սրտերում խորով փափագները բազում,
Որորում են առաջ վոտներն անընկեր,
Դոփում են գեախնը միլիոն կենտ հենակներ:

Յես տեսնում եմ նրանց՝ հեռուներից անձիբ,
Աչքերի մեջ սառած սարսափը անագին,
Շարժումներում ճնշող տխրություն ու ձանձիր,
Ու գեմքերին իշած ապտակները կյանքի,
Խոհերում՝ գիշերը անթափանց ու անել,
Դոփում են գեախնը միլիոն կենտ հենակներ:

Յեվ շարժվում են նրանք գլխիկոր ու արտում,
Քաղաքներում բոլոր և գյուղերում հեռին,
Ամեն մեկը կարծես իրա վոտն ե փնտրում,

Ձանձրացել են նրանք արդեն փայտե վոտից.
— Ձեր վոտները կերան հազար ուսմբ ու արկեր,
Վոր դոփեն գեախնը միլիոն կենտ հենակներ:

Ընկերներ իմ անթիվ, ընկերներ անհամար,
Յես տեսնում եմ անա ձեր վոտները կորած
Կապիտալի դժոխք հնոցների մեջ վառ,
Նրանց ծխաններում գորշ ու յերկնասլաց,
Վոր դարձել են հազար կյանք լափող կրակներ,
Վոր դոփեն գեախնը միլիոն կենտ հենակներ:

Յեվ բոցերը գեղին՝ բյուր կյանքերով վառվող,
Ծավալվել են վորպես մի անդիջում հրդեհ,
Թափ են առել վորպես ձեր կամքերը հառնող,
Խարխլում են արդեն պալատներ ու շինքեր,
Ու նրանց շուրջ իբրև յերգեր մահվան բոթի՝
Դոփում են գեախնը միլիոն կենտ հենակներ:

Յեվ կփլչեն նրանք: Յես լսում եմ արդեն
Աղաղակներ հուժկու, միլիոնների ցասում,
Վոտնաձայներ խրոխտ, վոր դոփում են իմ դեմ
Ամուր վոտների տեր բանակները բազում,
Վոր խորտակեն բոլոր հրանոթ ու տանկեր,
Վոր չդոփեն հողը միլիոն կենտ հենակներ:

Յես լսում եմ արդեն շառաչը պայքարի,
Ըմբոսացման անափ մաքառումն անհուն,
Վոր աշխարհը լափող վառ հրդեհը մարի,

Վոր մահը սավառնի կապիտալի հողում,
Ովկյաններում սառեն անթիվ ռումբ ու արկեր,
Վոր չգտնեն հողը միլիոն կենս հենակներ:

Յեվ աշխարհի անթիվ քաղաքներում մի որ,
Յեվ գլուղներում հետին, ճամբաների վրա,
Կբարձրանա վոսկի արեգակը բոսոր՝
Վոսկեղերձան բաշով կարմիր ձիու նման,
Յեվ կթնդան ողում հաղթանակի չերգեր,
— Պատմութուն կդառնաք, միլիոն կենս հենակներ:

1932 թ. ոգոստոսի 8.

Վ Ե Ի Չ Ա Ն Ո Ւ Յ Ս Ի Յ Ե Ի Գ Ը

Յես չերգում եմ ահա վերջալույսի չերգը,
Յեվ պայծառանում ե իմ հոգին,
Այնտեղ ընկերներս և սոված, և մերկ են,
Քաղաքներում հեռու արևմուտքի:

Այնտեղ ընկերներս գործազուրկ են, անտուն,
Այնտեղ վերջալույս ե, այնտեղ գիշեր,
Յես չերգում եմ և իմ չերգերով լի հողուն
Ըմբոստացման անափ ուժ ե իջել:

Յեվ վոչ վոք չի կարող իմ կոկորդը սեղմել,
Յես չերգում եմ հողով լի ու առատ,
Յես տեսնում եմ այնտեղ աճում են նոր սերմեր,
Վոր չկային այնտեղ չերբեք առաջ:

Այնտեղ ընկերներս սոված են և անտուն,
Յեվ քաղցը նրանց տվել ե ուժ,
Նրանց հոգիներում վառող ե կուտակվում,
Վոր բարձրանա կովի թանձր մշուշ:

Այնտեղ նրանք ահա թմբուկներ են խփում,
Յեվ կովի շեփորներ անկազոչ,
Նրանց շեփորների ձայներն են իմ չերգում,
Յես լսում եմ զորեղ մի մարտակոչ:

Խարխուլում ե անտեղ դառամած մի աշխարհ,
Յերբ վոտներով հուժկու հողն են դոփում,
Փռվել ե նրանց դեմ լուսեղ մի ճանապարհ՝
Արևմուտքի թանձր աղջամուղջում:

Յես չերգում եմ անա վերջալույսի չերգը,
Յեմ պայծառանում ե իմ հոգին,
Գիտեմ, ընկերներս վաղը պիտի չերգեն
Պայծառ արշալույսը արևմուտքի:

1932 թ. սեպտ.

Վ Ո Ս Կ Ի Ն

— Հայրիկ, ինչո՞ւ չե վոսկին
Արեգակի պես փայլուն:
— Վորովհետև նրա մեջ
Աշխատավոր մարդկության
Միտան ու արյունն ե այրվում:

— Հապա ինչո՞ւ չե դեղնել
Ինչպես համբուլը մահի:
— Տղաս, նրա չեռեից
Ագահ մարդիկ են ընկել,
Նա ել դեղնել ե անից:

— Հայրիկ, հայրիկ սիրելի,
Ասա, ինչո՞ւ չե հնչուն:
— Տղաս, սիրտը անով վի,
Նա դեռ չերկու աշխարհի
Արյան կովի չե կանչում:

*
*
*

Կմնա վառ արևը՝
Մեր կամքը հաղթող,
Կհնչի մեր բարևը
Սահմանից աչն կողմ:

Մի որ կեղևն դեմ դեմի,
Բանակ առ բանակ,
Կխորտակվի թշնամին,
Կըլնի հաղթանակ:

Կմնա վառ արևը՝
Մեր կամքը զրահ,
Կհնչի մեր բարևը
Աշխարհի վրա:

1932 թ.

ՅԵՐԳԵՐ ՀԱՐՎԱԾԱՅԻՆՆԵՐԻՆ

Աղմկում են քո հոգում
 Հազար ու մի չերգ,
 Հիմա հազար ու մի չերգ
 Աղմկում են քո հոգում,
 Դու ապրում ես ինչ վոր մի
 Չապրած խնդութուն,
 Հիմա հազար ու մի ձեռք
 Բեղ կանչում են ատեն:

Աշխատել ես այսոր դու
 Յեվ ժիր, և՛ աշխույժ,
 Ու ավել ես քո հոգուն
 Նոր թափ ու նոր ուժ.
 Հիմա դառնում ես դու ատեն,
 Յեվ գոհ, և՛ արի,
 Ու ժպտում ե քո հոգուն
 Փառքը պայքարիդ:

Այնտեղ կռիվ ե անեղ
 Մուրճի, յերկաթի,
 Կլանքն ե կառուցվում այնտեղ
 Կաթիլ առ կաթիլ.
 Այնտեղ հերոսը նա չե՛
 Ով քրտինք թափի,

Ում քրտինքը հուլի հետ
Կաթի չերկաթին:

Հիմա սուռն ես դառնում դու,
Իմ հերոս ընկեր,
Աղմկում են քո հոգում
Հաղար ու մի չերդ,
Դու ապրում ես ինչ վոր մի
Չապրած խնդութչուն,
Հիմա հաղար ու մի ձեռք
Քեզ կանչում են սուռն:

II

Յես քեզ իմ մեջ եմ զգում,
Հերոսական բարեկամ,
Հերոսական բարեկամ,
Յես քեզ իմ մեջ եմ զգում.
Ու քո շունչն ե իմ չերգում,
Կառուցողիչ հաղթական
Խինդն ու չեռանդը հախուռն
Արչունիս մեջ եմ զգում:

Ախ, յես գիտեմ, չես գիտեմ,
Դժվար, դժվար են այնքան,
Պայքարները քո վսեմ
Դժվար, դժվար են այնքան.
Մարտնչողիչ հեքը չես
Իմ հոգու մեջ եմ զգում,
Հերոսական բարեկամ,
Ինձ կովիդ մեջ եմ զգում:

Ու քո կովում հաղթական
Սոցիալիզմի չմարող
Վառ արևներն եմ զգում,
Ու խանդավառ կանչերի,
Ու գեմքերի արևկա
Պայծառատես ու ժպտուն
Շքեզ չերթն ե իմ հոգում—
Քեզ նրա մեջ եմ զգում:

III

Քո աչքերից խինդ ե ծորում
Մեքենայիդ վրա,
Քո աչքերի լուսե ծովում՝
Կյանքն եմ տեսնում ահա:

Դու լարել ես մկան և ուժ
Սոցիալիզմի համար,
Դու ցրում ես թախիժ ու մուժ՝
Աշխատանքով համառ:

Հերոսական պայքարից քո,
Հարվածային ընկեր,
Պատմությունը կմնա գոճ՝
Դարեր, դարեր, դարեր...

Դու փոխում ես կյանքը հիմա,
Փոխվում նրա հետ,
Սոցիալիզմի ճամբի վրա՝
Միլիոնների հետ:

Դրանով ել հպարտ ես դու
Մեքենայիդ դիմաց,
Յես քո համառ, պայծառ հոգու,
Յերզն եմ յերգում հիմա:

IV

Սոցիալիզմի բախտը, ընկեր,
Աշխատանքիդ թափի մեջ ե.
Լավ որերի տեսչերը մեր
Սրտիդ արագ հեքի մեջ են.
Ուժդ լարել, չեղի՛ր արի,
Յեվ հավատա — պայծառ մի որ
Սոցիալիզմի արեը նոր
Մեր աշխարհում կվարարի...

V

Հողիս փովեր փողոցներում, շինքերին,
Չեր դեմքերին ու սրտերին արևկա,
Չեր պայքարի, կառուցումի հեքերից
Չգար սիրաս ձեր սրտերում ինչ վոր կա:

Թափանցեր նա անդունդները ձեր սրտի,
Անծայրածիր յերկինքները ձեր հոգու,
Յեվ վեհուժյունը զգար նա ձեր կամքի,
Յեվ հուզերը արևի պես լուսատու:

Գարունները շնչեր հողիս ձեր կյանքի,
Աշունները, ձմեռները ցրտաշունչ,
Յեվ ամպերում ձեր հոգու լուրթ յերկնքի՝
Մոլորվեր նա, վորպես թռչուն, անտրտունչ:

Յեվ յերբ կրկին վերադառնար նա ինձ մոտ,
Հարցնեյի. — ասան, սիրտ իմ, ի՞նչ տեսար,
Պատասխան տար. — սրտերի մեջ արևա՝
Վեհ կամքերի, հոգիների բյուր աշխարհ:

1932 թ. ոգոստոս

VI

Ունկնդրեր իմ յերգին,
Ու հեքին, ընկեր,
Յես քո կողքին եմ կրկին,
Մեծ ճամբի վրա,
Հզոր կառուցման մեջ մեր
Դու արև պայծառ,
Յես ել քեզնից լույս առած՝
Ամպի մի քուլա:
Իմ յերգերը թափվեն թող
Վոնց անձրև զվարթ,
Վոր թրջում են քար ու հող,
Շենքեր, լեռ ու արտ,
Արևի տակ թող հոսի
Յերգերիս առուն,
Միրաս կանչի ու խոսի,
Վոնց պայծառ գարուն:
Վոր իմ յերգը միանա
Բո տաշած քարին,
Յեվ հողին քո իմանա,
Ուժ տա պայքարին.
Թափ առնի նա ու լինի,
Աննկուն, համառ,
Վոր վոչ մի բերդ չմնա
Առնելու համար:

1932 թ. ապրիլ

ԲԱՅ ՆԱՄԱԿ ՄԱՐՈՋՈՎԻՆ

Յես քեզ ճանաչում եմ, ընկեր իմ,
Միրտա զգացել ե խինդը քո,
Գործդ սրտիս այնքան մտերիմ՝
Դիտել եմ յես շատ յերեկո:

Հիմա ել կարծես իմ զիմաց
Կանգնած ե ծխանն աղյուսե,
Կանգնած ե խրոխտ, յերկնաբարձ՝
Գագաթին պսակը լուսե:

Թվում ե շարում ես ելի դու
Վերջին աղյուսները ծխանի,
Ու վեհությունը քս հոգու
Թողնում ես նրանց մեջ կենդանի:

Քո բարձունքներում ահարկու,
Ընկեր իմ, ընկեր իմ ենտուզիաստ,
Աղյուսներ ես շարում ահա դու,
Յեմ խրոխտ, և՛ համառ, և՛ զգաստ:

Ու կերտում ես դու պատմություն,
Ստեպում՝ հեռավոր Միրբիրի,
Կուզնեցկատրոյ քաղաքում,
Հեռավոր մասերում յերկրի:

Այնտեղ, ուր շաչել են շղթաներ
Քեզ նման հազարի վոտքերին,
Ուր տայգաները՝ անարգել
Աղմկել են բուքը շուրթերին:

Այդտեղ, Միրբիրում դու հիմա
Դարսում ես աղյուսը աղյուսին,
Բարձրաբերձ ծխանի վրա,
Քո ըմբոստ կամքով հերոսի:

Կառուցում ես դու մեծ զավոդ,
Մետաղաձուլական մի հսկա,
Վոր վողջ աշխարհը կրակոտ
Քո կամքի վեհությունը զգա:

Վոր ջարդենք ամեն մի մոռթ
Թշնամու՝ ներքին թե արտաքին,
Ամեն մի աղյուսդ մի բռունցք
Նրա ճակատին ու քունքին:

Ամեն մի աղյուսդ հաղթանակ
Սոցիալիստական նոր կյանքի,
Մենք շարժվում ենք բանակ առ բանակ,
Մեր դասակարգը կհաղթի:

Ու դրա համար ունկնդրիր
Հույզերիս ալեծուփ ծովին.
Հղում եմ վողջույնա Միրբիր,
Կուզնեցկատրոյ,
Ընկեր Մարոզովին...

ՅԵՐԳ ԵԱԽՏՅՈՐԱԿԱՆ

Մենք շախտյորներ ենք,
Շախտերում քանդում ենք,
Վոր յերկրին ածուխ տանք
Ու կյանք:

Մենք շախտյորներ ենք,
Հազար ու հզոր ենք,
Յերկրի ամեն խորշում
Մենք կանք:

Վեկապեն ասել ե,
Սիեզում խոսել ե,
Վոր յերկրին ածուխ տանք
Ու կյանք:

Մեր ուժը լարել ենք,
Մշուշը ցրել ենք,
Ու յերկրին ածուխ ել
Կտանք:

Մենք շախտյորներ ենք,
Կովում հաղթողներ ենք,
Այս թեժ կովում դեռ
Մենք կանք:

Յերկիր մեր, յերգիր դու,
Քեզ կամքը մեր հատու,
Քեզ համար մեր կյանքն ել
Կտանք:

Լենինսկ (Կուղբաս)
1931 թ. ոգոստոս

Դ Ա Ս Ա Լ Ի Ք Ը

Փողոցների մշուշում
Դեզերում ե մի տղա,
Նա հարբած ե ու ցեխոտ
Փողոցների մշուշում,
Որորվում ե ահա նա
Խոնավ մայթերի վրա,
Խոնավ մայթերի վրա՝
Փողոցների մշուշում:

Ե՛լ, գինեմոլ պատանի
Փողոցներում դեզերող,
Ճանաչում ես արդյոք դու,
Ե՛լ, գինեմոլ պատանի,
Ո՞վ ե գործում քո շնչով,
Ո՞վ ե քո սիրտը գերող,
Ո՞վ ե իր ցանցը լարել,
Վոր քեզ անկումը տանի:

Փողոցների մշուշում
Դեզերում ե մի տղա,
Նա գինու հետ ծծել ե
Թշնամու կամքը քինոտ,
Յեվ որորվում ե հիմա
Խոնավ մայթերի վրա,

Սոցիալիզմի մեծ ճամբին՝
Նա լերերուն ու գինոտ:

Հասկանում ե արդյոք նա,
Վոր ընկերները հազար
Լարել են ուժ ու մկան,
Հասկանում ե արդյոք նա,
Վոր հազարի շարքերից
Հեռացել ե ու չկա,
Վոր թողել ե այնտեղ նա
Մի արտասովոր մեքենա:

Դասալիք ես դարձել դու
Սոցիալիզմի մեծ գործում,
Փողոցներում դեզերող
Ե՛լ, գինեմոլ պատանի,
Հաղթահարիր թշնամուն,
Վորը քո մեջ ե գործում,
Վորպեսզի նա քեզ մի որ
Անդունդները չտանի:

1981 թ. դեկտեմբեր

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄՈՏԻՎՆԵՐ

Կոմսոմոլ են տղեն,
Աչքս վրեն մնաց,
Հրեն, ճամբի վրեն,
Ձիով են հւր գնաց:

Սիրտս տարավ իր հետ,
Կյանքս ել հւր մնաց,
Հերս կուլակ մի մարդ,
Հորս դուշման գնաց:

Լուսդ խավրի, իմ հեր,
Դու անարև մնաս,
Կոմսոմոլ են տղեն
Առանց բարև գնաց:

Կոմսոմոլ, ալ տղա,
Աչքս վրեղ մնաց,
Ասես սրտիս վրա
Ձիդ դոփելով գնաց:

II

Լինելի, հով լինելի,
 Նուսնչակի շող լինելի,
 Լազերում ննջած չարիս
 Յերեսին քող լինելի:

Մայիսի ցող լինելի,
 Իմ չարի քով լինելի,
 Թվանքը գրկած չարիս
 Թվանքին փող լինելի:

III

Իմ կյանքը քարոտ ճամբա,
 Լաչակս գլխիս ամպ ա,
 Իմ խավար հոգու համար՝
 Իմ չարը վառած լամպ ա:

Արևը դառ ա մանուս,
 Իմ չարը վար ա անուս,
 Մաշինի ձենից ասես
 Իմ սիրտը խաղ ա անուս:

Արևը հողի վրա,
 Մանուս ա շողն իրա,
 Կոմսոմոլ չարիս տված
 Բարևը սրտիս վրա:

IV

Բատրակ լինի, լավ լինի,
Սիրաք՝ սիրո գավ լինի,
Քան թե կուլակ մի տղա՝
Հոգուս վրա ցավ լինի:

ԹԱՌԶԱՆԻ*) ՄՈՐՄՈՔԸ

Շեղկիլանի բաղերի մեջ,
Թաղերի մեջ կեր ու խում ե,
Բյուլբյուլների խաղերի մեջ
Վարդի թուփը արնախում ե,
Հարեմի մեջ հեքը թառի
Սրտի նման բարախում ե,
— Թառզան, սիրած, գյոզալ լարիդ
Կամքը իր հոր փափախումն եր:

Յեսամանի ծառն ուներ
Յարիս նման խաս շրթունքներ,
Սեվ խաղողի թաղն ուներ
Յարիս նման սև աչունքներ,
Բյուլբյուլների բաղն ուներ
Յարիս այտերն վարդի թերթեր,
— Թառզան, սիրած գյոզալ լարիդ
Հոր քար սիրաք ամուր բերդ եր:

Թառի առաջ սիրտս բացի,
Յարի ցավը թառն ի՞նչ անի,
Վարդը տեսա, դարդս լացի,
Վարդը աչքի ցողն ի՞նչ անի,
Թաց աչքերս տվի բարձին,

*) Թառզան — Թառ նվագող

Վախ, չոր բարձը ինձ ինչ անի,
— Թառզան, սիրած գլոզալ յարիդ՝
Հերը հացով ծախեց խանին:

Մի թառան ուղտ չոքեց դռան,
Շեմքին ախր են իմ սիրտն եր,
Խանի ուղտը կոխեց վրան,
Սիրտս ախր սիրով լիքն եր,
Յարս խանին խաղալիք ե,
Ինձ համար նա կլանքս ինքն եր,
— Թառզան, յարիդ համար բերած
Խաս քյաջաֆան մահով լիքն եր:

Եյ, բաղամդյուլ չադրան վրան
Քյաջաֆի մեջ յարս ինքն եր,
Ռանդը յարիս դեղին դաֆրան՝
Աչքիս առաջ մահս ինքն եր,
Ուղտը կանգնեց, յարս վրան,
Վոտքերի տակ, վախ, իմ սիրտն եր,
— Թառզան, սիրած, գլոզալ յարիդ
Ուղտի վրա հարեմ տարան:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

1. * *	10
Հ Ա Ղ Պ Ա Մ Ա Ն Ա Ն Ե Ր	
2. * *	11
3. Կակաչ	12
4. Շիրիժը	13
5. Դամանական	14
6. Կաակ	16
7. Որացույցը	17
8. Բերքի յերզը	20
9. Խոհ	22
10. Ծովի հեռ	23
11. Խորհուրդ	
ՅԵՐԿԱՔԻ ՎԱՍՏՈՒՄԱՅԻՆԵՐ	
12. Տարեդարձի յերգ	27
13. Շենքը	30
14. Առավոտ	31
15. Լույսերը	32
16. Կգա նա	33
17. Քաղաքի հեռ	34
18. Յես հիշում եմ նորից	36
19. Առավոտ	38
20. Քաղաքը	39
21. Անավարտ պատմութիւն	43
22. Ա, ց	49
23. Ափերով	51
24. Յերգ հողթանակի	55

Վ Ե Ր Ո Ղ Ե Ռ Է

69

25. Գոյեալ	61
26. Դաշնակահար յերեթ	63
27. Բալլադ	64
28. Ժամապահ	66
29. Փլուզում	68
30. Սիմֆոնիա առանց լարերի	70
31. Գիշերամուտ	73

Վ Ե Ր Չ Ա Ղ Ա Ն Ա

32 Վերջալույս	77
33. Հենակները	80
34. Վերջալույսի յերգը	83
35. Վոսկին	85
36. Տոնավառ արև	86

Յերգեր հարվածայիններին

37. Աղմկում են քո հոգում	89
38. Յետ քեզ իմ մեջ եմ զգում	91
39. Քո աչքերից	92
40. Սոցիալիզմի բախումը, ընկեր	93
41. Հոգիս փուկեր	94
42. Ունկնդրիլը իմ յերգին	95
43. Բաց նամակ Մարտիկին	96
44. Յերգ շախատական	98
45. Դասուլիքը	100

Փողովրդական ճոտիվներ

46. Կոմսոմոլ են աղեն	107
47. Լինեյի հով լինեյի	106
48. Իմ կյանքը քարոտ համբո	107
49. Բարակ լինի լավ լինի	108
50. Քարգանի մարմոքը	109

ՀՀ Ազգային գրադարան



NL0365439

53880

891.99

U-27